Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N ՀՀԿԳՄՄՆԳՀԱՊՁԲ-25/113-Հ2

13.11.2025թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՄՆԳՀԱՊՁԲ-25/113 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «07» «04» 2026թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՍ ԷՍ ԷՅԶ ԷՅԶ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մայտա Գազանճեանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2025թ նոյեմբերի 13-ին կնքված N ՀՀԿԳՄՄՆԳՀԱՊՁԲ-25/113 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Ելնելով անհրաժեշտությունից, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը երկարաձգելով 30 օրացուցային օրով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4. Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

1. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2 ՀՎՀՀ 02698732 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ՝ ըստ ՀՀԿԳՄՄՆԳՀԱՊՁԲ-25/113-Հ1 համաձայնագրի	«ԷՍ ԷՍ ԷՅԶ ԷՅԶ» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թղմ. 38 շենք. 53 տարածք ՀՎՀՀ՝ 00218923 Ինեկոբանկ Հ/Հ՝ 2050422344061001
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Հ. Հակոբյան (ստորագրություն)	«ԷՍ ԷՍ ԷՅԶ ԷՅԶ» ---------- Մ. Գազանճեան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.